ԿՐԹԱԿԱՆ

საქართველოს განათლებისა და მეცნიერების სამინისტრო

# ՄԵԿՆԱՐԿԵՑ ՀԱՆՐԱՅԻՆ ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆԻ ՀԱՎԱԿՆՈՐԴՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ

***Վրաստանի կրթության եւ գիտության նախարարության նախաձեռնությամբ, հոկտեմբերի 24-ին մեկնարկել եւ մինչեւ դեկտեմբերի 4-ը կշարունակվի հանրային դպրոցի տնօրենի թեկնածուների հավաստագրման գործընթացը: Տնօրենի դիմորդների հավաստագրումը ներառում է երկու փուլ՝ թեստավորում ու հարցազրույց:***

Նշենք, որ հավաստագրման գործընթացին կարող են մասնակցել բարձրագույն կրթություն ունեցող Վրաստանի քաղաքացիները, ովքեր ունեն առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ:

Տնօրենի դիմորդների թեկնածուների գրանցումն անցկացվում է հետեւյալ հղումով՝ https://directors.mes.gov.ge: Այդ կայքում ցանկացողների համար հասանելի կլինեն նաեւ քննական ծրագիրն ու թեստային նմուշները:

Վերոնշյալ գործընթացի կապակցությամբ, Վրաստանի կրթության նախարարության նախաձեռնությամբ, տնօրեն դառնալ ցանկացողները հոկտեմբերի 26-ից el.ge կայքում վեբինարի տեսքով հնարավորություն ունեն խորհրդատվություն ստանալ հետեւյալ թեմաներով.

* Դպրոցի տնօրենի չափորոշիչներ,
* Կրթության որակի կառավարման մեխանիզմներ,
* Դպրոցի ռազմավարական պլանավորում եւ զարգացում,
* Դպրոցական ուսումնական պլանի մշակում,
* Դպրոցական ուսումնական ծրագրի իրականացում,
* Դպրոցական ուսումնական պլանի մոնիթորինգ եւ գնահատում,
* Մարդկային ռեսուրսների կառավարում եւ զարգացում,
* Մարդկանց ու գործընթացների անվտանգություն,
* Նյութական եւ ֆինանսական ռեսուրսների կառավարում,
* Տեղեկատվական ռեսուրսներ եւ ռազմավարական հաղորդակցություն,
* Աշակերտների իրավունքների պաշտպանությունը եւ նրանց աջակցության միջոցառումները,
* Դպրոցական մշակույթի ձեւավորում:

Հավաստագրմամբ հետաքրքրված անձինք հնարավորություն կունենան կոնկրետ հարցեր ուղարկել directors@emis.ge էլ. հասցեին:

Բացի այդ, հաճախ տրվող հարցերի վերլուծության հիման վրա 2022 թվականի հոկտեմբերի 30-ից դեկտեմբերի 16-ը պարբերաբար կանցկացվեն տեղեկատվական հանդիպումներ, որտեղ շահագրգիռ կողմերը կստանան համապարփակ տեղեկատվություն իրենց հետաքրքրող հարցերի վերաբերյալ:

# ՎԵՐՍԿՍՎՈՒՄ Է ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՂ «ՄԵՐ ԲԱՆԱԿԸ» ՆԱԽԱԳԻԾԸ

***Վրաստանի պաշտպանության նախարարությունը, կրթության եւ գիտության նախարարության հետ համատեղ, շարունակում է «Մեր բանակը» նախագիծը: Համաճարակի պատճառով, երկու տարով դադարեցված ծրագիրը վերսկսվել է 2022-2023 ուսումնական տարում:***



Ըստ պաշտպանության նախարարության, նախագիծը, որը նախատեսում է պաշտպանության ուժերի ներկայացուցիչների հանդիպումներ Վրաստանի հանրակրթական դպրոցների աշակերտների հետ, նպատակ ունի բարձրացնել երիտասարդների իրազեկությունը եւ խորացնել հայրենասիրական ոգին:

Առաջին անգամ զինվորականներն այցելել են ակադեմիկոս Իվանե Ջավախիշվիլու անվան Թբիլիսիի թիվ 53 հանրակրթական դպրոց: Զինվորներն ուսանողներին ներկայացրեցին ծրագրի կարեւորությունն ու նպատակները: Հետագայում նրանք սպառիչ պատասխաններ տվեցին հետաքրքրող հարցերին:

ՓԱՌԱՏՈՆ

# ԱՄՓՈՓՎԵՑԻՆ «ՅՈԹԸ ՍԱՐԻ ՀԵՏԵՎՈՒՄ» ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

***2022 թվականի հուլիսին Երեւանի Հովհաննես Թումանյանի թանգարանը դիմեց Հայ Առաքելական եկեղեցու Վիրահայոց թեմի «Հովհաննես Թումանյանի տուն» գիտամշակութային կենտրոնին՝ թանգարանի կողմից նախաձեռնվող «Յոթը սարի հետեւում» հայրենաճանաչողական-գիտակրթական մրցույթ-փառատոնին Վրաստանից մասնակիցների ընդգրկելու խնդրանքով:***



Ստանալով Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Կիրակոս վարդապետ Դավթյանի համաձայնությունն ու օրհնությունը, «Թումանյանի տուն» կենտրոնը կապվեց թեմապատկան կրթամշակութային կառույցների հետ, համակարգեց եւ կազմակերպեց Թբիլիսիի «Հովհաննես Թումանյանի տուն» գիտամշակութային կենտրոնի, Բաթումիի Ալեքսանդր Մանթաշյանցի անվան կենտրոնի, Սամցխե-Ջավախեթիի եւ Ծալկայի ընդհանուր առաջնորդական փոխանորդության Ախալքալաքիի «Կարապետ արքեպիսկոպոս Բագրատունի» եւ Նինոծմինդայի «Ռաֆայել Ջավախ» կրթամշակութային ու երիտասարդական կենտրոնների մասնակցությունը փառատոնին: Ընթացիկ աշխատանքները քննարկվում էին ինչպես Վրաստանի մասնակիցների միջեւ, այնպես էլ՝ Երեւանի թանգարանի կողմից կազմակերպվող առցանց հանդիպումների ընթացքում:

Եզրափակիչ փուլ դուրս եկան եւ մրցանակներ շահեցին Թբիլիսիի, Ախալքալաքիի եւ Նինոծմինդայի կենտրոնները: Երեւանյան եզրափակիչ միջոցառմանը Վիրահայոց թեմից ներկա էին Ախալքալաքիի «Կարապետ արքեպիսկոպոս Բագրատունի» կենտրոնի ղեկավար Արմենուհի Պետրոսյանն ու Նինոծմինդայի «Ռաֆայել Ջավախ» կենտրոնի սան Եսենյա Գորոյանը:

«Հովհ. Թումանյան» Գրան-պրի մրցանակին արժանացավ «Կարապետ արքեպիսկոպոս Բագրատունի» գիտահետազոտական խումբը, մրցանակը սահմանել էր Հովհ. Թումանյանի թանգարանը:

«Սարգիս Հարությունյան» անվանակարգային մրցանակը ստացավ Սեդա Աբովյանը («Հովհ. Թումանյանի տուն» կենտրոն) (անհատ մասնակից), մրցանակը սահմանել է ՀՀ ԳԱԱ Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտը:

«Ռաֆայել Ջավախ» գիտահետազոտական խումբն արժանացավ խրախուսական մրցանակի:

«Հովհաննես Թումանյանի տուն» կենտրոնը փառատոնի բոլոր մասնակիցների անունից իր երախտագիտությունն է հայտնում Երեւանի Հովհաննես Թումանյանի անվան թանգարանին սերտ համագործակցության եւ ընձեռած բացառիկ հնարավորությունների համար:

***«Հովհ. Թումանյանի տուն» կենտրոնի տեղեկատվական համակարգ***

ՇԱԽՄԱՏԻ ՊԱՏԱՆԻ ՆՎԻՐՅԱԼՆԵՐԸ

# ԻՄ ՇՆՈՐՀԱԼԻ ԹՈՌՆԻԿՆԵՐԸ

***Փոքր Արագյալի հանրային դպրոցը փոքրիկ Վանիկի պապիկի, տատիկի եւ մայրիկի դպրոցն է եղել: Քանի՜-քանի անգամ են նրանք միասին, ճանապարհը երկարացնելով, անցել դպրոցի մոտով:***

- Ա՛յ, այնտեղ մեր ուսուցչանոցն էր,- ամեն անգամ մի առանձին ուրախությամբ ցույց էր տալիս մայրիկը լուսավոր պատուհանները:

Այսպես, օր-օրի ծնվեցին Վանիկի առաջին երազանքները. ե՞րբ պիտի ինքն էլ մեծանա ու դպրոց գնա: Եվ եկավ սպասված 2017 թվականի սեպտեմբերը:

Փոքրիկ քույրիկը՝ Վարդուհին, տանը մնաց, բայց դպրոց ճանապարհելիս ասաց.

- Տես, հա՜, լավ կսովորես, հանկարծ պապիկին ամոթով չթողնես...

Դասվար Քրիստինե Եղոյանը հին ծանոթի պես դիմավորեց Վանիկին:

- Բարի գալուստ, տղաս, դու էլ, անշուշտ, քո տատիկի՝ Բուրաստանի պես մեր դպրոցի պարծանքը կդառնաս,- ասաց նա:

Անցան տարիներ:

Հիմա Վանիկ եւ Վարդուհի Բասենցյանները սովորում են նույն դպրոցի 6-րդ եւ 7-րդ դասարաններում:

Ուսման գերազանցիկներ են: Նրանք միշտ շրջապատված են իրենց սիրելի ուսուցիչներով ու դասընկերներով, որոնցից այնքան բան ունեն սովորելու՝ միշտ պրպտող են եւ անընդհատ նորը, կատարյալը որոնող: Շնորհալի երեխաներն ազատ ժամերին սիրում են նկարել, գնդակ խաղալ եւ հեծանիվ քշել:

- Եթե կա ձգտում՝ կարելի է ամեն ինչ էլ հասցնել. ե՛ւ դասերը սովորել, ե՛ւ ընկերներին օգնել, ե՛ւ տան գործերով զբաղվել:

Վանիկի մոտ շատ վաղուց ի հայտ են եկել մաթեմատիկայի նախանձելի ընդունակություններ:

2021 թվականի մայիսից Վանիկն իր քույր Վարդուհու հետ մասնակցում է Նինոծմինդայի մարզադպրոցի շախմատի խմբակի պարապմունքներին: Այս սպորտաձեւի նկատմամբ սերը նրանց մեջ դեռ փոքր տարիքից արթնացրել է հորեղբայր Վահեն:

Իրենց մեկ տարվա շախմատային գործունեության ընթացքում, փոքրիկ շախմատիստները մի շարք հանրապետական մրցումների են մասնակցել եւ պայքարի մեջ մտել ճանաչված պատանի շախմատիստների հետ: Եղել են Քարելիում, Ախալցիխեում, Թբիլիսիում եւ Փոթիում: Արժանացել են հավաստագրերի. նրանց համար նման մրցումները քննություն են եղել: Կարեւորն այն չէր, թե ո՞ւմ բաժին կհասնեն գլխավոր մրցանակը, կարեւորն այն էր, որ մրցումների բոլոր փուլերում պատանի շախմատիստները հանդես էին բերում պայքարելու ունակություն, շախմատային իրենց կարողությունները կատարելու, գործելու մեծ ցանկություն, կամք, եռանդ, ներդրում՝ հաղթանակի հասնելու ջանքեր: Փորձված մրցակիցների հետ այնքան էլ հեշտ չի եղել պատանի նինոծմինդացիների պայքարը, եւ փոքրիկ շախմատիստները բավարարվում էին համեստ արդյունքով, սակայն ստեղծագործական տեսակետից մի շարք հաջողությունների հասնում: Մարզիչների կարծիքով, մրցաշարից մրցաշար «աճում» են փոքրիկ շախմատիստները: Մարզիչ Յուրա Ղույումչյանը քիչ բան չի արել իր սաների հաջողության համար: Նրա սաներից Սարգիսը, Թամարան, Մերին, Կորյունը, Տիգրանը, Գառնիկը, Ռաֆիկը, Արարատը եւ ուրիշներ մրցումներում միշտ էլ հաղթող են ճանաչվել ու ապացուցել, որ իրենց մարզական կարգը բարձր է, զուր չեն անցել շախմատի խմբակային աշխատանքի ժամերը:

Մի բանում հաստատ համոզված եմ, որ անխոնջ աշխատանքը հաղթահարում է բոլոր խոչընդոտները, եւ որ երջանկության ճանապարհն աշխատելն է, համառ աշխատանքը: Բոլոր նշանավոր մարդիկ քրտնաջան աշխատանքի շնորհիվ են բարձունքներ նվաճել:

Շախմատային խաղը միայն բավականություն չէ: Այն հարկավոր է, որ քո մեջ զարգացնես կարեւոր հատկություններ, կամքի ուժ, հաղթելու վճռականություն:

Արդեն նոր ուսումնական տարվանից առաջին դասարաններում շաբաթական մեկ ժամ հատկացվել է շախմատին, որը շատ գովելի նախաձեռնություն է:

Վերջերս Խոջաբեկ գյուղի տոնին նվիրված միջոցառմանն անցկացվեց մինչեւ 14 տարեկան պատանի շախմատիստների մրցույթ, որտեղ Վանիկ Բասենցյանը ցույց տվեց գեղեցիկ խաղ եւ համառ պայքարից հետո հաղթեց մրցակիցներին՝ առաջին անգամ արժանանալով պատվավոր մրցանակի՝ առաջին կարգի մեդալի: Իսկ մեկ շաբաթից հետո, Նինոծմինդա քաղաքի մարզադպրոցի շախմատի խմբակի տա-



նը անցկացված աղջիկների առաջնությունում Վարդուհին մեծ հաջողության հասավ, գրավեց երրորդ պատվավոր տեղը եւ արժանացավ երրորդ կարգի մեդալի:

- Շատ ընդունակ են ձեր թոռնիկները: Շնորհիվ մեծ աշխատասիրության եւ պարտաճանաչության, կարճ ժամանակամիջոցում լուրջ հաջողության հասան,- ասում է մարզիչը:

Մարզադպրոցի շախմատի խմբակի սաների հաջողություններն է՛լ ավելի կկրկնապատկվեն, եթե այն սենյակը, որտեղ տեղի են ունենում պարապմունքները, անցկացվի ջեռուցման համակարգ, եւ տեղադրվեն համակարգիչներ:

- Բարի՜ երթ եւ նոր հաջողություններ Վանիկին, Վարդուհուն ու նրանց շախմատասեր ընկերներին:

***ԿՈՐՅՈՒՆ ԲԱՍԵՆՑՅԱՆ***

***ք. Նինոծմինդա***

ՀԱՐՑ - ՊԱՏԱՍԽԱՆ ✵ ԱՅԼԱԶԱՆ ✵ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

# ԿԱՎԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ. ԻՆՉՈ՞Վ Է ՕԳՏԱԿԱՐ ԿԱՎԸ



***Վերջերս բժշկական ամսագրում կավաբուժության վերաբերյալ հոդված էր տպագրվել: Կարդացի, թեեւ կավի օգտակարության մասին փաստարկները շատ մարախլապատ էին: Գուցե դո՞ւք օգնեք հարցը հստակեցնել:***

**Գ.ԳՐԻԳՈՐՅԱՆ**

*Ախալքալաքի*

Նախ նշենք, որ կավը պարունակում է խոնավություն, կարողանում է պահպանել ջերմությունը: Կավի ազդեցությամբ մաշկը լավ տաքանում է, ինչը բթացնում է ցավերը եւ նվազեցնում բորբոքային գործընթացները: Մարմնի տաքացման դեպքում, ուժեղանում է քրտնարտադրությունը, որը նպաստում է թունավոր նյութերի արտազատմանը:

Կավն ունի տարատեսակ կազմ, նրա բաղադրության մեջ մտնող նյութերը բարերար ազդեցություն ունեն մաշկի վրա: Կավը կարելի է օգտագործել քրոնիկական եւ սուր արտրիտների, ռադիկուլիտների, նեֆրիտների եւ այլնի դեպքում:

Կավաբուժությունը հակացուցված է սրտի հիվանդությունների, սուր բորբոքային գործընթացների, արյան բարձր ճնշման, երիկամների աշխատանքի խանգարումների եւ այլ դեպքերում:

Կավաբուժությունը ջերմաբուժության արդյունավետ մեթոդներից է: Ջրի հետ կավն առաջացնում է մարմնի բարերար շփում ունեցող զանգված, որն ավելի է բարձրացնում բուժման արդյունավետությունը: Կավի տարբեր տեսակներն ունեն տարբեր բաղադրություն, գույն եւ բուժային հատկություններ:

Սպիտակ կավը նպաստում է մազերի ամրացմանը եւ խոչընդոտում մազաթափությունը: Դրական ազդեցություն ունի նուրբ մաշկի վրա, նպաստում է վերականգնողականությանը:

Գորշ կավն օգտակար է չոր մաշկին, ունի խոնավացնող հատկություն:

Երկնագույն կավը հարուստ է միկրոտարրերով եւ տարբեր հանքային աղերով: Հաճախ է կիրառվում բազմաթիվ հիվանդությունների բուժման ժամանակ, նաեւ արդյունավետ միջոց է կոսմետոլոգիայում:

Օգտագործման համար անհրաժեշտ է վերցնել առանց կողմնակի խառնուրդների կավ, խոշոր կտորները մանրացնել, լցնել որեւէ ամանի մեջ, ավելացնել ջուր, մի քիչ կերակրի աղ, թողնել 10-12 ժամ, որից հետո հեղուկը թափել:

Կավն անհրաժեշտ է տաքացնել ջրային բաղնիքի միջոցով մարմնի ջերմաստիճանից քիչ բարձր (40-46°), այնուհետեւ քսել մարմնի անհրաժեշտ հատվածին:

Մեկ պրոցեդուրան տեւում է շուրջ 20 րոպե, թույլատրվում է 2 օրը մեկ անգամ, կամ 2 օր՝ պրոցեդուրա, 3-րդ օրը՝ հանգիստ:

Բուժման ողջ կուրսը կազմում է 12-15 պրոցեդուրա:

ՋԱՐՄԱՆԱՀՐԱՇ ԱՇԽԱՐՀ

# 52 ՏԱՐԵԿԱՆՈՒՄ ԴԱՐՁԱՎ ՈՒՍԱՆՈՂ



***Հայտնի խոսք է՝ սերը տարիք չի ճանաչում: Հավանաբար, նույնը կարելի է ասել նաեւ ուսման մասին: Հենց այդ զգայումն էր, որ 52-ամյա Նոնա Մարտիաշվիլուն դրդեց հանձնել ընդունելության ազգային միասնական քննություններն ու դառնալ Ախալցիխեի պետական համալսարանի պետական կառավարման ֆակուլտետի ուսանողուհի:***

Իսկ մինչ այդ, նա՝ որպես մենեջեր, աշխատում էր Վազիանիի պլաստմասի վերամշակման գործարանում: Բարձրագույնում սովորելու համար թողեց այդ աշխատանքը:

Նոնան ունի երկու զավակ. որդին ավարտել է Ախալցիխեի պետհամալսարանի իրավաբանական ֆակուլտետը, իսկ դուստրը սովորում է նույն բուհում, նույն ֆակուլտետի երկրորդ կուրսում:

- Ռուսական դպրոց ավարտած աղջկաս օգնելը դարձավ բուհ ընդունվելու շարժառիթ: Քննությանը բարձր գնահատականներ չեմ ստացել, սակայն ֆակուլտետն անվճար է, ֆինանսավորվում է պետության կողմից, այնպես որ, ձրի ուսում ստանալու հնարավորություն ունեմ,- ասաց Նոնա Մարտիաշվիլին եւ հավելեց, որ մեկուկես տարի առաջ սկսել է սովորել անգլերեն եւ այժմ լեզվին տիրապետում է միջին մակարդակով:

- Համալսարան ընդունվելու կապակցությամբ ստիպված եմ թողնել աշխատանքս Վազիանիում եւ տեղափոխվել Ախալցիխե, որտեղ ապրում են դուստրս ու սկեսուրս,- նշում է 52-ամյա ուսանողուհին:

ՀԵՏԱՔՐՔԻՐ Է...

# ԾՈՎՈՎ ՊՍԱԿՎԱԾՆԵՐԸ

## Այվազովսկու կյանքում երկու կիրք կար. գեղանկարչությունն ու Աննա Սարկիսովան

***Նրանց դեմ էր ամեն ինչ. օրենքը, տարիքը, եկեղեցու դրվածքը: Հանուն նրա, Այվազովսկին երկկնության դիմեց, իսկ Աննան ամուսնու մահից հետո, սեփական կամքով 25 տարի մեկուսացավ իրենց տանը:***



1817 թվականի հուլիսի 17-ին վաճառական Գեւորգ Այվազյանի եւ ասեղնագործուհի Հռիփսիմեի ընտանիքում ծնվեց արու զավակ: եկեղեցական մատյանում երեխային գրանցեցին՝ որպես Հովհաննես Այվազյան: Գեղանկարչի հայրը ժամանակին մեծահարուստ վաճառականներից էր: Աշխարհով ճանապարհորդելով՝ վեց լեզու էր սովորել եւ կատարելապես տիրապետում էր առեւտրի գործին: Ի վերջո, ապաստանել էր Սեւ ծովի ափին, Թեոդոսիայում, ամուսնացել ու հինգ զավակ ունեցել:

### ԹԵՈԴՈՍԻԱՅԻՑ՝ ՊԵՏԵՐԲՈՒՐԳ

Տղան մանկուց բացառիկ ունակություններ էր ցուցաբերում արվեստի նկատմամբ: Նրբաճաշակ երաժշտական ընկալում ուներ եւ ինքնուս ջութակ էր նվագում: Բայցեւ, գեղանկարչական տաղանդը ոչ մի կերպ չէր զիջում երաժշտական օժտվածությանը: Գեղանկարչի մանկական նկարները չեն պահպանվել: Նա ավազին էր նկարում: Թուղթն ու ներկերը թանկ էին: Դաժան ալիքները, սակայն լվանում ու տանում էին պատանի նկարչի արարումները, եւ այդ ժամանակ թռչող առագաստները երեւացին ծննդական տան ճերմակ պատերին: Հայրը չէր զայրանում: Մինչեւ նկարներն ուրվագծվեցին նաեւ այլոց պատերին: Ու Թեոդոսիան բողոք բարձրացրեց: Վերջապես «չարագործը» հայտնաբերվեց եւ «բերման ենթարկվեց» քաղաքագլուխ Ալեքսանդր Իվանովիչ Կազնաչեևի գրասենյակ: Բայց Թեոդոսիայի քաղաքագլուխը, որին Այվազովսկին հետագայում երախտագիտությամբ իր «երկրորդ հայր» էր անվանում, նրանում առաջին հերթին նկարիչ տեսավ: Տղային ներկեր ու վրձիններ նվիրեց, Իվան անվամբ կոչեց, տարավ իր տուն ու ծանոթացրեց կարեւոր մարդկանց հետ: Եվ սկսեց գրել մայրաքաղաքի հայտնի մարդկանց՝ գեղանկարչին աչքի տակ առնելու խնդրանքով:

Իվան Այվազովսկին ընդունվեց Գեղարվեստի կայսերական ակադեմիա՝ գանձարանի հաշվին:

1837 թվականին երիտասարդ գեղանկարիչն արժանացավ Ոսկե մեծ մեդալի «Շպիլ» եւ «Մեծ ռեյդ» նկարների համար: Նրա ուսումնառումը ակադեմիայում ավարտվեց սահմանված ժամկետից երկու տարի շուտ: Այվազովսկու հովանին Գեղարվեստի կայսերական ակադեմիայի նախագահ Ալեքսեյ Նիկոլաեւիչ Օլենինն էր: Երիտասարդին սպասում էր փայլուն ապագա:

Մի անգամ ծովափնյա զբոսանքի ժամանակ կայսր Նիկոլայ Առաջինը, կանգնած լինելով թիավոր շոգենավի պատյանին, կանչել է Այվազովսկուն. «Ես հողի թագավորն եմ, դու՝ ծովի»:

Սանկտ-Պետերբուրգ իր ժամանումներից մեկի ժամանակ Այվազովսկին ներկայացվեց ճանաչված մի այրու, որը հարսնության տալու երկու դուստր ուներ: Բնականաբար, գեղատես օրիորդներն անմիջապես երիտասարդ ու անվանի գեղանկարչի մոտ աշակերտ գրանցվեցին: Այրին չէր թաքցնում իր հրճվանքն ու փորձում էր գուշակել, թե դուստրերից որին կընտրի Այվազովսկին: Եվ սակայն, հիասթափությունն ավելի մեծ էր, երբ Այվազովսկին, հայտարարելով իր նշանադրության մասին, ներկայացրեց ընտրյալին՝ այդ աղջիկների դայակ Յուլյա Յակովլեւնա Գրեւսին: Ազնվակիրթ Պետերբուրգը հավանություն չտվեց Այվազովսկու ընտրությանը՝ հանդիմանելով, որ նկարիչը կարող էր առավել շահավետ ընտրություն կատարել: Որոշ ընտանիքներում նույնիսկ նա գռռզության ու իր ոչ ազնվական ծագման մասին ակնարկների հանդիպեց:

Այվազովսկին իր կյանքում երկու անգամ էր ցույց տվել իր բնավորությունը՝ իր դիրքը բառիս բուն իմաստով խաղաքարտին դնելով: Առաջին անգամն այն ժամանակ էր, երբ Եվրոպա քառամյա ստեղծագործական ուղեւորումից հետո, հաղթանակած վերադարձավ Ռուսաստան: Հայրենիքում Այվազովսկուն սպասում էին ակադեմիկոսի կոչումը, անձնական ազնվատոհմությունն ու հողատարածքը Ղրիմում: Բայց մայրաքաղաքում բնակվելու եւ պալատի զարդը դառնալու փոխարեն, երիտասարդ նկարիչը մեկնեց իր գավառական Թեոդոսիան եւ սկսեց այնտեղ տուն կառուցել՝ սեփական նախագծով: Արքայական զայրույթից նրան փրկեց միայն խոստումը ամառն անցկացնել ղրիմյան ծովափում, իսկ ձմեռը՝ Սանկտ-Պետերբուրգում:

Ամուսնությունը երկրորդ համաձակությունն էր, որը քիչ էր մնում վերջ տար նրա կարիերային: Այվազովսկին իր հարսնացուին տարավ Թեոդոսիա, որտեղ եւ պսակվեց նրա հետ: Ընտանիքում ծնվեց չորս աղջիկ:

**(Շարունակությունը՝ հաջորդ համարում)**

**Պատրաստեց ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՋՅԱՆԸ**

## ԱՆԵԿԴՈՏՆԵՐ

*☺ Ճանապարհային ոստիկանությունում.*

*- Դուք հարբած վիճակում վրաերթի եք ենթարկել մի կնոջ:*

*- Պարոն կապիտան, սթափ վիճակում չէի կարողանա... այնուամենայնիվ, կինս է...*

*☺ Նորապսակ կինը՝ ամուսնուն.*

*- Արի', պահմտոցի խաղանք: Եթե ինձ գտնես, ես քոնն եմ: Եթե չգտնես՝պահարանում եմ:*

*☺ Կինը դիմում է ամուսնուն.*

*- Ձախ ձեռքս ինչ-որ շատ է քոր գալիս, ասում են՝ փողի նշան է:*

*Ամուսինն, առանց թերթից կտրվելու.*

*- Չեմ տա:*

*☺ Ուսուցչուհին հարցնում է աշակերտին.*

*- «Ես գեղեցիկ եմ». սա ո՞ր ժամանակն է:*

*- Անցյալ, տիկին Անթառամ:*

## ԹԵՎԱՎՈՐ ՄՏՔԵՐ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Կրթության ամենաբարձր արդյունքը հանդուրժողականությունն է:

***ՀԵԼԼԵՆ ԱԴԱՄՍ ՔԵԼԼԵՐ***

Կրթությունը չի նախապատրաստում կյանքին. կրթությունն ինքնին կյանքն է:

***ՋՈՆ ԴՅՈՒԻ***

Կրթված մտքի նշան է կարծիքն առանց ընդունելու հաշվի առնել կարողանալը:

***ԱՐԻՍՏՈՏԵԼ***

Երեխայի ուսուցման նպատակն է նրան ընդունակ դարձնել հետագայում զարգանալու առանց ուսուցչի օգնության:

***ԷԼԲԵՐԹ ՀԱԲԱՐԴ***

Կրթության ամբողջ նպատակը հայելիները պատուհաններ դարձնելն է:

***ՍԻԴՆԵՅ Ջ.ՀԱՐԻՍ***

Ուսումը կանոններն է սովորեցնում, փորձը՝ բացառությունները:

***ԲԵՆՋԱՄԻՆ ԴԻԶՐԱԵԼԻ***

Վատ տրամադրությո՞ւն ունեք՝ գնացեք թատրոն: Եթե անգամ տրամադրությունը չբարձրանա, գոնե ֆեյսբուքում նկար կունենաք:

***Կ.ԴԻՄԱՔՍՅԱՆ***

***«Վրաստանի» ընթերցող Ծալկայի մունիցիպալիտետ***

# ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

## ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆ. «ԿՑԱՆԿԱՆԱՄ, ՈՐ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԿՆՔՎԻ ՄԻՆՉԵՎ ՏԱՐԵՎԵՐՋ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Մենք հույս ունենք, եւ դա կարեւոր նրբություն է, որ մինչեւ խաղաղության պայմանագրի ստորագրումը ավարտված կլինեն դելիմիտացիայի աշխատանքները: Որքանով է դա իրատեսական. եթե հաշվի առնենք, որ Պրահայում մենք պայմանավորվածություն ենք ձեռք բերել, որ դա տեղի է ունենալու 1991 թվականի սահմանների հիման վրա, դա կարող է լինել իրատեսական, քանի որ այդ սահմաններն ըստ էության հայտնի են,- ասել է Նիկոլ Փաշինյանը:

Անդրադառնալով Սոչիում ծրագրված եռակողմ հանդիպման հնարավորության թեմային՝ Հայաստանի վարչապետը հաստատեց Սոչիում Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի եւ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի հետ հնարավոր եռակողմ ձեւաչափով հանդիպման իր մասնակցությունը:

- Այո, Ռուսաստանի Դաշնության նախագահի կողմից առկա է հրավեր հոկտեմբերի 31-ին Սոչիում անցկացնել եռակողմ հանդիպում: Ես հաստատել եմ մեր մասնակցությունը: Տեղեկություն չունեմ, թե ադրբեջանական կողմը հաստատե՞լ է մասնակցությունը, թե՞ ոչ,- նշել է Հայաստանի վարչապետն ու հավելել, որ վերջին անգամ այդ ձեւաչափով հանդիպում է ունեցել նախորդ տարվա նոյեմբերին, եւ շատ հարցեր են կուտակվել:

- Կարծում եմ, ամենակարեւոր ակնկալիքները կապված են այս ընթացքում տեղի ունեցած իրադարձությունների գնահատականին եւ մեկնաբանությանը: Ընդ որում, ավելի ետ կարող եմ գնալ եւ հասնել մինչեւ 2020 թվականի նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարությանը: Կարծում եմ, որ շատ կուտակված հարցեր կան, որոնց վերաբերյալ որոշակի մտքերի փոխանակում, պարզաբանումներ, հարցադրումներ պետք է հնչեն,- հայտարարել է Նիկոլ Փաշինյանը:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՊԿ-ԻՑ ԴՈՒՐՍ ԳԱԼՈՒ ՀԱՐՑԸ ՉԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ



*Հայաստանի Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանը՝ պատասխանելով հարցին, թե «Հայաստանը ՀԱՊԿ-ից դուրս կգա՞, թե՞ ոչ», եթե, ի վերջո, կազմակերպությունը հստակ դիրքորոշում չարտահայտի Ադրբեջանի կողմից Հայաստանի ինքնիշխան տարածք ներխուժելու կապակցությամբ, պատասխանել է, որ Հայաստանի իշխանություններն այսօր ՀԱՊԿ-ից դուրս գալու հարց չեն քննարկում:*

- Հայաստանի Հանրապետությունը սպասում է ՀԱՊԿ-ի արձագանքին, եւ արձագանքն առնվազն այս փուլում պետք է լինի քաղաքական: Հետագայում, եթե պարզ դառնա, որ այնուամենայնիվ ՀԱՊԿ-ը որոշել է դուրս գալ տարածաշրջանից, մենք հնարավոր է՝ փաստի առաջ կանգնենք: Բայց Հայաստանի իշխանությունը այսօր նման հարց չի քննարկում: Սպասում ենք գործողությունների, սպասում ենք արձագանքի,- ասաց Սիմոնյանը:

Հարցին, թե որքա՞ն են սպասելու Հայաստանի իշխանությունները, Սիմոնյանը պատասխանել է, որ, ըստ իրավիճակի, ժամանակն այլեւս սուղ է:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԳ ՆԱԽԱՐԱՐԸ ՀԱՆԴԻՊԵՑ ՀՌՈՄԻ ՊԱՊԻՆ

*Հոկտեմբերի 25-ին պաշտոնական այցով Վատիկանում գտնվող Հայաստանի արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանը հանդիպում ունեցավ Նորին Սրբություն Ֆրանցիսկոս Պապի հետ:*



Շնորհակալություն հայտնելով հանդիպման հնարավորության համար՝ Արարատ Միրզոյանը Սրբազան Քահանայապետին փոխանցեց հայ ժողովրդի ու կառավարության ջերմ ողջույնները: Նախարարը նշեց, որ իր այցը Վատիկան տեղի է ունենում Հայաստանի եւ Սուրբ Աթոռի միջեւ դիվանագիտական հարաբերությունների հաստատման 30-ամյա հոբելյանական տարում: Այն լավ հնարավորություն է քննարկելու դարավոր պատմական կապերի ու նույնական հոգեւոր արժեքների վրա հիմնված երկկողմ հարաբերությունները:

Հայաստանի արտաքին գործերի նախարարը երախտագիտություն հայտնեց 44-օրյա պատերազմի եւ պատերազմին հաջորդած շրջանում Հռոմի Պապի կողմից հնչեցրած խաղաղության բազմաթիվ ուղերձների ու կոչերի համար:

Արարատ Միրզոյանը Նորին Սրբությանը ներկայացրեց տարածաշրջանում ստեղծված իրավիճակը՝ ընդգծելով հումանիտար հարցերի հասցեագրման կարեւորությունը, եւ այս առիթով Հռոմի Պապին փոխանցեց Հայաստանի վարչապետի ուղերձը:

## ՔԱՂԱՔԱԲՆԱԿ ՉԱՇԽԱՏՈՂ ՄԱՅՐԵՐԸ ԵՎՍ ԿՍՏԱՆԱՆ ՄԻՆՉԵՎ 2 ՏԱՐԵԿԱՆ ԵՐԵԽԱՅԻ ԽՆԱՄՔԻ ՆՊԱՍՏ

*Հայաստանի Ազգային ժողովը երկրորդ ընթերցմամբ եւ ամբողջությամբ ընդունեց կառավարության ներկայացրած օրենքի նախագիծը, որով հնարավորություն է տրվում մինչեւ 2 տարեկան երեխայի խնամքի նպաստ նշանակել ոչ միայն գյուղաբնակ, այլ նաեւ քաղաքաբնակ չաշխատող մայրերին:*

Օրենքի գործողությունը տարածվելու է 2023-ի հունվարի 1-ին եւ դրանից հետո ծնված երեխաների մասով: Ընդ որում, վարձու աշխատողների եւ գյուղաբնակ ծնողի համար գործող օրենսդրական կարգավորումները գործելու են, եթե երեխան ծնվել է մինչեւ 2023թ. հունվարի 1-ը, իսկ գյուղաբնակ ծնողի դեպքում՝ նաեւ, եթե դիմումը ներկայացվել է մինչեւ 2023թ. դեկտեմբերի 31-ը:

Խնամքի նպաստի չափը սահմանում է Հայաստանի կառավարությունը՝ խնամքի արձակուրդում գտնվող ծնողին «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի չափի նկատմամբ տոկոսային կապով, իսկ խնամքի արձակուրդում չգտնվող ծնողին՝ խնամքի արձակուրդում գտնվող ծնողի համար սահմանված չափի 85 տոկոսը չգերազանցող չափով: Խնամքի արձակուրդում գտնվող գյուղաբնակ ծնողին խնամքի նպաստ կվճարվի խնամքի արձակուրդում գտնվող եւ չգտնվող ծնողների համար սահմանված չափերի հանրագումարի չափով:

Այսպիսով, 2023 թվականի հունվարի 1-ից եւ դրանից հետո ծնված երեխաների ծնողներին նշանակվելու է խնամքի նպաստ՝ անկախ բնակության վայրի հասցեից: Այսինքն, ի տարբերություն գործող կարգավորումների, խնամքի նպաստ կնշանակվի նաեւ քաղաքաբնակ չաշխատող մայրերին:

## ԱՐԳԵԼՎԵԼ Է Կ.ԶԱՏՈՒԼԻՆԻ ՄՈՒՏՔԸ ՀԱՅԱՍՏԱՆ

*Ռուսաստանի Պետդումայի ԱՊՀ գործերի, եվրասիական ինտեգրման եւ հայրենակիցների հետ կապերի հանձնաժողովի նախագահի առաջին տեղակալ Կոնստանտին Զատուլինի մուտքը Հայաստան արգելվել է:*

Հայաստանի Ազգային ժողովի աշխատակազմի արտաքին կապերի վարչության պետ Տիգրան Սեյրանյանը ԱԺ ղեկավարության անունից գրություն է ուղարկել Զատուլինին, որում նշվում է, որ Հայաստանի հասցեին նրա վերջին հրապարակային հայտարարությունները վնասում են երկու պետությունների միջեւ բարեկամական ու դաշնակցային հարաբերությունների զարգացմանը:

ԱԱԾ մամուլի կենտրոնից հրաժարվեցին պատասխանել հարցին, թե ի՞նչ հիմքով է արգելվել Զատուլինի այցը Հայաստան՝ նշելով, որ նման տեղեկատվություն չեն կարող տրամադրել, քանի որ դա խախտում է տվյալ անձի անձնական կյանքի գաղտնիությունը:

- Նման տեղեկատվություն կարող ենք տրամադրել միայն ձեր կողմից նշված անձին կամ վերջինիս կողմից լիազորված անձին,- պարզաբանեցին ԱԱԾ-ից:

Կոնստանտին Զատուլինը «Տելեգրամ»-ի իր էջում արձագանքել է ԱԺ կողմից ուղարկված նամակին՝ համարելով վիրավորական քայլ:

«Մեզ համար անսպասելի էր, նամակ ստացանք ՀՀ ԱԺ արտաքին կապերի վարչության պետից: Մեզ ասացին, որ իմ այցը անցանկալի է, եւ որ իմ հայտարարությունները վնասում են Հայաստանի Հանրապետությանը»- նշված է Զատուլինի գրառման մեջ:

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ՎԱՏԻԿԱՆՈՒՄ

*Հոկտեմբերի 25-ին Հռոմի Տիրամորը նվիրված Սանտա Մարիա Մաջորե բազիլիկի Սալուս Պոպուլի Ռոմանի հրաշագործ սրբապատկերի մատուռում տեղի է ունեցել Հայաստանի խաղաղությանը նվիրված սուրբ պատարագ, որը մատուցել է Վատիկանի Պետական քարտուղար Կարդինալ Փիետրո Պառոլինը՝ ներկայությամբ Ամենապատիվ եւ Գերերջանիկ Ռաֆայել Պետրոս ԻԱ կաթողիկոս պատրիարքի, Հայաստանի արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանի, Սուրբ Աթոռում հավատարմագրված դիվանագիտական մարմնի անդամների, եկեղեցական բարձրաստիճան անձնավորությունների, քաղաքական ներկայացուցիչների եւ հայ ու օտարազգի պատկան հավատացյալների:*

### ԵՐԵՔ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԸ ԿԱԶՄԵԼ Է 14,1 ՏՈԿՈՍ

*Հայաստանի վիճակագրական կոմիտեի տվյալներով, Հայաստանի տնտեսական ակտիվության ցուցանիշը 2022 թվականի հունվար-սեպտեմբերին 14,1 տոկոսով աճել է, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:*

*Արդյունաբերական արտադրանքի ծավալը այս տարվա հունվար-սեպտեմբերին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, ավելացել է 10 տոկոսով: Իսկ գյուղատնտեսական համախառն ներքին արտադրանքի ծավալն 9 ամսում նվազել է 0,7 տոկոսով:*

*2022 թվականի հունվար-սեպտեմբերին սպառողական գների ինդեքսը, 2021-ի հունվար-սեպտեմբերի համեմատ, ավելացել է 8,6, արդյունաբերական արտադրանքի գների ինդեքսը՝ 4,1 տոկոսով:*

### ՉՀԱՎԱՍՏԱԳՐՎԱԾ ԲՈՒԺԱՇԽԱՏՈՂՆԵՐԸ ՀԱՋՈՐԴ ՏԱՐՎԱՆԻՑ ԱՇԽԱՏԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉԵՆ ՈՒՆԵՆԱ

*Հայաստանի առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանը հավաստագրեր հանձնեց առողջապահության նախարարության բժիշկ-խորհրդատուներին:*

*Նախարարը նշեց, որ հավաստագրման գործընթացը վերաբերում է միայն կլինիկական գործունեություն իրականացնող բուժաշխատողներին:*

*-2023 թվականի հունվարի 1-ից այն բուժաշխատողները, ովքեր չեն ստանա հավաստագրեր, իրավունք չեն ունենա շարունակել աշխատանքը բժշկական հաստատություններում: Հավաստագիրը, բժշկական կրթության հետ միասին, պարտադիր պայման է, որպեսզի անձը մասնագիտական գործունեություն ծավալելու իրավունք ունենա,- ասաց նախարարը:*

### COVID-19. ՄԵԿ ՇԱԲԱԹՈՒՄ ԱՐՁԱՆԱԳՐՎԵԼ Է ՎԱՐԱԿՄԱՆ 231 ԴԵՊՔ

*Հայաստանի առողջապահության նախարարության տեղեկատվությամբ, Հայաստանում, հոկտեմբերի 17-23-ն ընկած ժամանակահատվածում, կատարվել է 3034 թեստավորում, գրանցվել է կորոնավիրուսային հիվանդության 231 դեպք: Նշված ժամանակահատվածում մահվան դեպք չի գրանցվել:*

*Վերջին 7 օրվա ընթացքում առողջացածների թիվը կազմում է 415, ներկայում բուժում է ստանում 512 քաղաքացի:*

*Հայաստանում, ընդհանուր առմամբ, համավարակի ժամանակահատվածում կատարվել է 3 մլն 226 հազար 167 թեստավորում, հաստատվել է կորոնավիրուսային հիվանդության 445 հազար 100 դեպք: Առողջացածների ընդհանուր թիվը կազմում է 434 հազար 17, մահացել է 8 հազար 706 քաղաքացի:*

ՎԵՐԱԹԱՂՈՒՄ

## ՄԱՍՈՒՆՔՆԵՐԸ ԿՏԵՂԱՓՈԽՎԵՆ ԽՈՋԻՎԱՆՔԻ ՊԱՆԹԵՈՆ



Սիրելի հայրենակիցներ. 2022 թվականի հոկտեմբերի 30-ին՝ կիրակի օրը, Թբիլիսիի Սուրբ Գեւորգ առաջնորդանիստ եկեղեցում, հավարտ կիրակնօրյա Սուրբ Պատարագի, տեղի կունենա հոգեհանգստյան կարգ՝ վերջերս Վանքի Մայր տաճարի տարածքում հայտնաբերված մասունքների վերաթաղման կապակցությամբ: Այնուհետեւ, ժամը 14:00 -ին, Թբիլիսիի հայ գրողների եւ հասարակական գործիչների Խոջիվանքի պանթեոնում կկատարվի մասունքների վերաթաղման արարողություն:

Մեր ներկայությամբ եւ մասնակցությամբ հարգենք եւ պատվենք նախնյաց հիշատակը:

***Վիրահայոց թեմի մամլո դիվան***

ԾԱՆՐԱՄԱՐՏ

## ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՎԱՔԱԿԱՆԻ ԱԿՏԻՎՈՒՄ՝ 28, ԻՍԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԿՏԻՎՈՒՄ՝ 15 ՏԱՐԲԵՐ ԱՐԺՈՂՈՒԹՅԱՆ ՄԵԴԱԼՆԵՐ



Հոկտեմբերի 15-25-ը Ալբանիայի Դյուրես քաղաքում անցկացվող ծանրամարտի Եվրոպայի երիտասարդական առաջնությունում, Վրաստանի մինչեւ 23 եւ մինչեւ 20 տարեկանների հավաքականները, ընդհանուր առմամբ, նվաճեցին 28 տարբեր արժողության (9 ոսկե, 13 արծաթե եւ 6 բրնզե) մեդալներ: Նշենք, որ Վրաստանի հավաքականի մինչեւ 23 տարեկանների հավաքականի մարզիչ, Աթենքի 28-րդ Օլիմպիական խաղերի չեմպիոն Գիորգի Ասանիձեն ճանաչվեց առաջնության լավագույն մարզիչ եւ պարգեւատրվեց ոսկե մեդալով:

Եվրոպայի երիտասարդական առաջնությունում Հայաստանի մինչեւ 23 եւ մինչեւ 20 տարեկանների հավաքականներն իրենց ակտիվում գրանցեցին տարբեր արժողության 15 մեդալ՝ 7 ոսկե, 4 արծաթե, 4 բրնզե:

ՄԱՅՐԱՔԱՂԱՔ

## ԻՆՉ Է ԿԱՌՈՒՑՎԵԼՈՒ ՀԱՎԼԱԲԱՐԻ ՄԵՏՐՈՅԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ

*Թբիլիսիի Հավլաբարի մետրոյի մերձակայքում շինարարություն իրականացնող «Էյ-Պի-Էս» ՍՊԸ-ն հայտարարություն է տարածել Ավլաբարի մետրոյի մոտ նախատեսվող նախագծի մասին վերջին օրերին տարբեր աղբյուրների եւ լրատվամիջոցների չճշտված տեղեկությունների տարածման առնչությամբ:*



«Էյ-Պի-Էս» ՍՊԸ-ի փոխանցմամբ, նշված տարածքում եղել են քաղաքացիական շինություններ, այդ իսկ պատճառով քաղաքի երկու գլխավոր հատակագծերով այս հողամասում ընդլայնվել է բարձր ինտենսիվ զարգացման գոտի: 1993 թվականին նշված տարածքում կառուցվել է շինություն, որի հեղինակներն են հայտնի ճարտարապետներ Գիգա Բատիաշվիլին եւ Անրի Դրուաշվիլին:

«Մեր ընկերությունը նշված հողամասը ձեռք է բերել 2004 թվականին՝ հաշվի առնելով, որ եղել է համաձայնեցված նախագիծ եւ շինարարության թույլտվություն: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ այս նախագիծն անտեսել է պատմական կառուցվածքը, ընկերությունը համաձայնել է նախագծի հեղինակների հետ փոփոխություններ կատարել նախագծում»,- նշված է տարածած հաղորդագրության մեջ:

Ըստ ընկերության պնդման, 2013 թվականին փոփոխված (ուղղված) նախագիծը համաձայնեցվել է Թբիլիսիի տարածքային խորհրդի եւ Թբիլիսիի ճարտարապետական ծառայության հետ:

«Վերջին 4-5 տարիների ընթացքում Թբիլիսիի քաղաքապետարանի հետ ակտիվ բանակցություններ են ընթանում այս նախագծի իրականացման շուրջ: Այս ընթացքում Թբիլիսիի քաղաքապետարանը մշտապես պահանջել է կրճատել մշակման ծավալներն ու տարածքը: Ի վերջո, ընկերությունը ստիպված է եղել համաձայնել քաղաքապետարանի խնդրանքին:

2022 թվականին Թբիլիսիի քաղաքապետարանի հետ համաձայնեցվել է նոր, ճշգրտված նախագիծ, որի մշակման տարածքը կրճատվել է ինչպես սկզբնական նախագծի, այնպես էլ՝ 2013 թվականի համաձայնեցված նախագծի համեմատ: Նախագիծը բազմաֆունկցիոնալ, ոչ բնակելի շենք է (եռահարկ), եւ տարածքի զգալի մասը հատկացված է հանրային տարածքին»,- նշել են ընկերությունից:

Նրանց փոխանցմամբ, ընկերությունը 18 տարվա ընթացքում ծախսել է մեծ ռեսուրսներ, կատարվել են մի շարք պատմական ուսումնասիրություններ եւ վերլուծություններ, տարբեր ճարտարապետների մասնակցությամբ անցկացվել է մի քանի ճարտարապետական փակ մրցույթ, ստեղծվել է ավելի քան 30 էսքիզ, հանրային քննարկում է կազմակերպվել մասնագիտական շրջանակներում, ուստի կարեւոր է, որ այսօր իրենք ունեն փոխհամաձայնություն Թբիլիսիի քաղաքապետարանի հետ, կա համաձայնեցված եւ հաստատված նախագիծ, որը ընկերությունը մտադիր է իրականացնել:

***ՆՈՐԱՅՐ ՄԻՍԿԱՐՅԱՆ***
***«Ալիք Մեդիա»***



## ԽԱՉԲԱՌ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 1.Թբիլիսիում լույս ընծայված «Գեղարվեստ» ամսագրի խմբագիրը, աշուղ Ջիվանու որդին: 3.Վրաց հանրահայտ դերասանուհի: 8.Հայաստանի ԱԺ նախագահ ... Սիմոնյան: 9.Մասերի չբաժանվող, պինդ երիկամաքար: 11.Էդուարդը՝ մտերմիկ շրջապատում: 12.Բայի ժամանակ: 13.Էլեկտրոնիկայի խանութ: 14.«... տեսնեմ, իմ սիրուն ծի» (երգ): 16.Քաղցրավենիքի տեսակ: 20.Թնդանոթներից ու հրանոթներից կրակվող զինամթերք: 22.Թռչունների խումբ: 23.Զլցված, սնամեջ: 26.Գետ Իտալիայի հյուսիսային մասում: 27.Դրական պատասխան: 28.Հացաբույսի տեսակ: 30.Հայկական ամսանուն: 31.Մաշտոցյան այբուբենի զինվոր: 33.Ետադաս կապ: 34.«Ինչո՞ւ է աղմկում գետը» ֆիլմի հերոսը (անունը): 37.«... կտրածը կլավանա, լեզվինը՝ ոչ» (առած): 38.Վիրահայ գրող Վ.Հովսեփյանի «..., ..., կրակ տուր ինձ» ժողովածուն: 39.Լեւոն Շանթի գրական հերոսուհի: 40.Վսեմ, շատ բարձր: 42.Հայտնի դուդուկահար ... Հովսեփյան: 44.Միակ, նմանը չունեցող: 45.Հայաստանի հանրային հեռուստատեսության առաջին հաղորդավարուհի ... Շլեպչյան: 46.Ողջ, ամբողջ: 48.Արեւմտահայ գրող Մեծատուրյանի անունը: 49.Բար, միրգ: 50.Հայ մեծ գրող Ավ.Իսահակյանի թոռը: 51.«Թող ... իմ մայրը հարազատ» (երգ): 53.Իտալացի գրող Ալբերտո Մորավիայի վեպը: 54.Հայաստանի ԿԿ առաջին քարտուղար ... Դեմիրճյան:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 1.Վանքային համալիր Արցախում: 2.Գիտության, տեխնիկայի, արվեստի հասկացության անվանում: 3.Վառ կարմիր: 4.Իռլանդական ծագումով, անգլիացի դրամատուրգ: 5.Ժխտական նախածանց: 6.Գետ Ասիայում: 7.Միանիշ, պարզ թիվ: 8.Քանդակագործ, «Քարերի սիմֆոնիա» քանդակի հեղինակը (անունը): 10.Կալինինոն այժմ: 14.Հայաստանի ՀՀ հաղորդավար, մեկնաբան, լրագրող ... Երկանյան: 15.«Տժվժիկի» հեղինակը: 17.Արեգակնային համակարգի մոլորակ: 18.Վիրահայ գրող Ժ.Սնխչյանի ժողովածուներից: 19.Սանտիմետր: 21.Վրաստանի երկրամասերից: 24.Նավի խոհարար: 25.Ամենայն հայոց կաթողիկոս ... Ա Մուրադբեկյան (Տփղիսեցի): 29.Ժամանակի միավոր: 30.Խողդող, շատ շոգ: 32.Ռուս մեծ պոետ: 35.Իսպանացի հայտնի թենիսիստ: 36.Բերդ-ամրոց Ախալցիխեում: 39.Բանաստեղծության տեսակ: 40.Վրաց հանրահայտ դերասանուհի ... Անջափարիձե: 41.Հին հունական աստվածուհի: 42.«Վարդանանք» վեպի հերոս: 43.Խաղողի չիր: 47.Վարպետ օդաչու: 49.Սրածայր գագաթ: 51.Նար-Դոսի «Ես եւ ...» ստեղծագործությունը: 52.Օժանդակ բայ:

***Կազմեց ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ***

### ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 6.Ռոմեո: 8.Զուռնա: 10.Լերկ: 11.Լավ: 13.Սալամ: 14.Ամերիկա: 16.Օպել: 17.Կուզ: 18.Մակակ: 20.Շոթա: 21.Վան: 22.Ավիշ: 26.Ակին: 28.Դյումա: 31.Յոթ: 32.Լիտ: 34.Անոդ: 35.Իջեւան: 36.Մաքի: 38.Լիճ: 41.Բնիկ: 43.Հոմանի: 45.Մարշ: 48.Մալ: 49.Լուկա: 52.Նմուշ: 53.Գիդ: 54.Շուք: 55.Դիակ: 56.Տիֆ: 57.Գիհի: 58.Կահ: 59.Լեռ: 60.Միս:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 1.Հոդացավ: 2.Պոեմ: 3.Վզկապ: 4.Առնել: 5.Մալիկով: 7.Ելարան: 9.Ավազակ: 12.Ակութ: 15.Մերիկո: 19.Կայուն: 23.Վայրի: 24.Շիթիլ: 25.Ռադա: 27.Շիա: 29.Յանի: 30.Մոմ: 32.Լեւոն: 33.Տնակ: 37.Քրոմ: 39.Ճերմակ: 40.Գալիֆե: 41.Բիլ: 42.Իսկուհի: 44.Մագիլ: 46.Անի: 47.Շուկա: 50.Ուշիմ: 51.Աքիս:

Գլխավոր խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ
Գլխ. խմբագրի տեղակալ՝ ՅՈՒՐԻ ՊՈՂՈՍՅԱՆ
Համարի պատասխանատու՝ ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ
Համակարգչային ձեւավորումը՝ ՏԻԳՐԱՆ ՍԻՐԱԴԵՂՅԱՆ

ჩვენი მისამართი: თბილისი 0105, გ.ათონელის ქუჩა 5,
Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105 Գ.Աթոնելի փ. 5
ტელ. Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge E-mail: vrastan.press@gmail.com
Գրանցման վկայական № 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

«ვრასტანი»
თბილისი, საქართველო
"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445